Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
սեպտեմբերի 30-ի N  1291 - Լ  որոշման

**ՑԱՆԿ**
**ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ  ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու կատարողը | Ակնկալվող արդյունքները | Կատարման ժամկետը | Վերստուգելի չափանիշ | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը | 2020թ. ընթացքում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 6 մանկատանը կխնամվի 649 երեխա | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 2. | ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ ում խնամվող երեխաններին ընտանիքներ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Հասարակական կազմակերպություններ<br><br>/համաձայնությամբ/ | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված Երեխայի խնամքն ու դաստիարակությունը կենսաբանական ընտանիքում | 2020թ. ընթացքում | Ծրագրի շրջանակում ընտանիք կվերադառնա 20 երեխա, կկանխարգելվի 369 երեխայի մուտքը հաստատություններ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br><br>Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վերադարձնելու (բեռնաթափում) | | | | | |
| 3. | Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ ի 18-23 տարեկան շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է շրջանավարտների իրավունքների և շահերի պաշտպանությունը | 2020թ. ընթացքում | Ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի 4 շահառուի | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 4. | Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Հասարակական կազմակերպություններ<br>/համաձայնությամբ | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամությու ն ունեցող երեխաների խնամքը | 2020թ. ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող 3277 երեխայի կտրամադրվեն ցերեկային խնամքի ծառայություններ և նրանց ընտանիքներին՝ սոցիալ-հոգեբանական ծառայություններ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կենսաբանական ընտանիքներում | | | |
| 5. | Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը | 2020թ. ընթացքում | նախարարության համակարգի երեխաների խնամքի գիշերօթիկ մեկ հաստատությունում կխնամվի 100 երեխա | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 6. | Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց և երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահոված է թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնումը | 2020թ. ընթացքում | Թրաֆիքինգի /շահագործման/ ենթարկված մինչև 32 անձի, այդ թվում երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների տրամադրում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 7. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների | 2020թ. ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան 17 երեխայի կտրամադրվի մինչև | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | խնամքի տրամադրման ծառայություններ | | իրավունքների և շահերի պաշտպանությունը | | 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք | |
| 8. | Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված և հաշմանդամություն ունեցող երեխայի և նրա ընտանիքի սոցիալ-հոգեբանական վերականգնումը, երեխայի ներառումը հասարակությանը | 2020թ. ընթացքում | Երեխայի և ընտանիքի աջակցության 6 կենտրոնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 600 երեխայի և նրանց ընտանիքներին կտրամադրվեն սոցիա-լհոգեբանական ծառայություններ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 9. | Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ ում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կյանքի հմտությունների ձեռքբերումը և ներառումը հասարակությանը | 2020թ. ընթացքում | Մանկատներում խնամվող դպրոցահասակ՝ 7-18 տարեկան 86 երեխայի կտրամադրվի մանր ծախսերի համար նախատեսված գումար /գրպանի ծախս/ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10. | Կենսաբանական ընտանիքներ տեղափոխված երեխաների ընտանիքներին բնահրային օգնության փաթեթի տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Հասարակական կազմակերպություններ<br>/համաձայնությամբ/ | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված Երեխայի խնամքն ու դաստիարակությունը կենսաբանական ընտանիքում | 2020թ. ընթացքում | 389 երեխայի կենսաբանական ընտանիքների կտրամադրվի բնահրային օգնության փաթեթ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br>Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 11. | Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ ի շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի ներառումը հասարակությանը | 2020թ. ընթացքում | Մանկատների 4 շրջանավարտի տրամադրվի միանվագ դրամական օգնություն | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 12. | Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված և հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքն ու | 2020թ. ընթացքում | Խնամատար ընտանիքներում խնամք կտրամադրվի առանց ծնողական խնամքի մնացած 94 երեխայի | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | դաստիարակություն ը ընտանիքում | | | |
| 13. | Մարդկանց թրաֆիքինգի և/կամ շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց և երեխաների սոցիալհոգեբանակ ան վերականգնումը | 2020թ. ընթացքում | Թրաֆիքինգի /երեխաների/ շահագործման/ զոհերին կտրամադրիվի դրամական փոխհատուցում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| | Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի տարբեր կառույցների կադրերի մասնագիտական պատրաստման և վերապատրաստման իրականացում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/ | Իրականացվելու է երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի տարբեր կառույցների կադրերի մասնագիտական ուսուցում և վերապատրաստում | 2020թ. ընթացքում | Վերապատրաստված մասնագետներ | Ֆինանսավորում չի պահանջում |
| 14. | Խնամակալությա ն և հոգաբարձության հանձնաժողովներ ի անդամների, համայնքներում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Տարածքային կառավարման և | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերապատրաստված անդամներ, համայնքներում | 2020թ. ընթացքում | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների և համայնքների համապատասխան ոլորտի | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | երեխաներին սոցիալական ծառայություններ տրամադրող մասնագետների, այդ թվում՝ դեպք վարողների ուսուցումների իրականացում | ենթակառուցվածքներին ախարարություն | երեխաներին սոցիալական ծառայություններ տրամադրող վերապատրաստված մասնագետներ | | աշխատակիցների 50 տոկոսի վերապատրաստում | |
| 15. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված /ԿԴԻՀ/ երեխաների տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա ՀՀ մարզպետարանների կողմից շուրջօրյա հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման ծրագրերի | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թվի նվազում | 2020թ. ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ուղղված կանխարգելման ծրագրեր | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մշակում և իրականացում | | | | | |
| 16. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տեղեկատվական համակարգի արդիականացում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կենտրոնացված հաշվառման վերաբերյալ մշակված և ներդրված տեխնիկական նկարագրեր | 2020թ. ընթացքում | Կենտրոնացված հաշվառման վերաբերյալ մշակված և ներդրված տեխնիկական նկարագրեր | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 17. | Հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելելու, հաստատություններից երեխաներին ընտանիքներ տեղափոխելու գործընթացը խթանելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Երեխաների խնամքի և դաստիարակության իրականացում ընտանիքներում | 2020թ. ընթացքում | Ընդունված իրավական ակտեր | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նախագծերի ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ | | | | | |
| **18.** | Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում երեխաների և դեռահասների առողջապահական ծառայությունների և բուժօգնության անհրաժեշտ ծավալների ապահովում | Առողջապահության նախարարություն | Երեխաների և դեռահասների առողջապահական ծառայությունների բյուջետային ֆինանսավորման շարունակականությ ան ապահովում | 2020թ. ընթացքում | Տարեկան նպատակային ծրագրերում ամրագրված երեխաներին և դեռահասներին ուղղված պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության ծավալներ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| **19.** | Նորածնային և մանկական արտագնա անհետաձգելի բուժօգնության ծառայությունների շարունակականությ | Առողջապահության նախարարություն | Մարզերում մասնագիտացված անհետաձգելի բուժօգնության կարիք ունեցող հիվանդներին մասնագիտացված | 2020թ. ընթացքում | Մինչև 1 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի նվազում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ան ապահովում ՀՀ մարզերում | | բուժօգնության տրամադրում | | | |
| **20.** | Երեխաների հիվանդանոցային բուժօգնության ծրագրի շարունակական իրականացում, մատուցվող ծառայությունների զարգացումների ապահովում | Առողջապահության նախարարություն | երեխաների հիվանդանոցային բուժօգնության մատչելիության առկա իրավիճակի պահպանում և բարելավում | 2020թ. ընթացքում | մինչև 5տ. երեխաների մահացության ցուցանիշի նվազում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| **21.** | Նյութափոխանակությ ան ժառանգական հիվանդությունների և բնածին այլ շեղումների հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգի ծրագրի շարունակական իրագործում, հայտնաբերված հիվանդ երեխաների հետագա բուժօգնության և | Առողջապահության նախարարություն | Նյութափոխանակությ ան ժառանգական հիվանդությունների և բնածին այլ շեղումների հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգի ծրագրի շարունակական իրագործում, հայտնաբերված հիվանդ երեխաների հետագա | 2020թ. ընթացքում | Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի իրականացվող սկրինինգներ նորածինների 100%, իսկ լսողության, անհասության ռետինոպաթիայի և ազդրի բնածին դիսպլազիայի ուղղությամբ սկրինինգները՝ 50% դեպքերում: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հսկողության կազմակերպում | | բուժօգնության և հսկողության | | | |
| **22.** | Հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար վերականգնողական բուժօգնության մատչելիության և որակի բարելավում | Առողջապահության նախարարություն | Զարգացման խանգարումներ և հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող ծառայությունների մատչելիության բարձրացում, վերականգնողական բուժօգնության կազմակերպում | 2020թ. ընթացքում | Մարզային/տարածաշրջանային վերականգնողական մանկական նոր կենտրոնի ստեղծում, արտահիվանդանոցային պայմաններում տարեկան շուրջ 100 երեխայի վերականգնողական բուժման կազմակերպում | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| **23.** | Մանկական հոգեբույժների և կլինիկական հոգեբանների պատրաստում կլինիկական օրդինատուրայում՝ օրդինատուրա ընդունելության անվճար տեղերի սահմաններում | Առողջապահության նախարարություն | Մանկական հոգեբուժության ոլորտում կադրային դեֆիցիտի մեղմացում | 2020թ. ընթացքում | Մանկական հոգեբուժության ոլորտում կադրերի առկայությունը | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 24. | Հանրապետության բոլոր մարզերում նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Կրթության ոլորտ | Նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային և ծախսարդյունավետ մոդելների փուլային ներդրման միջոցով ՀՀ մարզերում ընդլայնվել է երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական կրթության մեջ: | 2020թ. ընթացքում | Մարզերի նախադպրոցական ուսումնական հաստատություն չունեցող թվով 60 համայնքներում ծառայությունների որևէ տեսակ է մատուցվում:<br><br>«Կրթության բարելավում» վարկային ծրագրի նախադպրոցական միկրոծրագրերի շրջանակներում 20 հաստատություններում ընդգրկվել է շուրջ 500 երեխա:<br><br>ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ ՀՀ մարզերում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվել է շուրջ 7.7 հազար երեխա: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br><br>Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 25. | Համընդհանուր ներառական հանրակրթության | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի | Հանրակրթական դպրոցներում ընդլայնվել են | 2020թ. ընթացքում | Հանրապետության 8՝ Սյունիքի, Լոռու, Տավուշի, Արմավիրի, Շիրակի, | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համակարգի ներդրում | նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>Կրթության ոլորտ | կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման հնարավորություննե րը | | Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերում և Երևան քաղաքում հանրակրթության ոլորտում անցում է կատարվել համընդհանուր ներառական կրթության համակարգին, ներդրվել է երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ, ուսուցչի օգնականի հաստիք | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 26. | Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների վերակազմակերպում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունները վերակազմակերպվել են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է հանրակրթական դպրոցում՝ առանց նրանց ընտանիքից կտրելու | 2020թ. ընթացքում | ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում 2 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ վերակազմակերպվել են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, նշված կենտրոններից իրականացվել է աշակերտների տեղափոխումը հանրակրթական դպրոց | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 27. | Ազգային փոքրամասնությունների համար որակյալ կրթության մատչելիության ապահովում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Կրթության ոլորտ | Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ընդլայնվել է իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորությունը | 2020թ. ընթացքում | Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար տպագրված են ուսումնական պլանով նախատեսված՝ հանրակրթական առարկայական ծրագրեր ու դասագրքեր: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե Հայաստանի<br><br>Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 28. | Հանրակրթական դպրոցներում սովորողների շրջանում քաղաքացիական (այդ թվում՝ երեխայի իրավունքներին, գենդերային խնդիրներին, ժողովրդավարությանը) վերաբերող թեմաների ուսուցում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Կրթության ոլորտ | Ապահովված է սովորողների իրազեկվածությունը քաղաքացիական (այդ թվում՝ երեխայի իրավունքներին, գենդերային խնդիրներին, ժողովրդավարությանը) վերաբերող թեմաների շուրջ: | 2020թ. ընթացքում | Հասարակության ակտիվ, պատասխանատու քաղաքացիներ, որոնք ունակ են պաշտպանել սեփական, և հարգել ուրիշների իրավունքները, ինքնուրույն որոշումներ կայացնել, արժևորել սեփական ինքնությունը և առաջնորդվել հանդուրժողականության սկզբունքներով: | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 29. | Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Կրթության ոլորտ | Ապահովված է ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների երեխաների ազատ ժամանցի ու ամառային հանգստի կազմակերպումը: | 2020թ. ընթացքում | Ամառային ճամբարներում կազմա կերպվել է ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների՝ 7-13 տարեկան  շուրջ 4800 երեխաների ամառային հանգիստը: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 30. | «Երաժշտական և արվեստի դպրոցնե-րում ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Ուսման վարձավճարների փոխհատուցումը, կնպաստի գեղարվեստական կրթության մատչե-լիության ապահով-մանը, կրթական հաստատություննե-րի պահպանմանը և մշակույթի ոլորտի հետագա մասնագետներով համալրմանը | 2020թ. ընթացքում | ՀՀ 146 երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, փողային և լարային նվագարանների բաժինների 2361 սովորող կստանա անվճար մասնագիտական կրթություն | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, Հայաստանի<br><br>Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 31. | «ՀՀ-ում շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը ու կատարելագործմանը» ծրագրի իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Շնորհալի երեխաների բացահայտման և հետա-գա ուսուցման գործընթա-ցի կազմակերպումը կապահովի մասնակիցների պրոֆեսիոնալ աճ և զարգացում, միջազգային ասպարեզում և մշակութային շուկայում հայ կատարողական արվեստի մրցունակության ապահովում | 2020թ. ընթացքում | Արվեստի ոլորտում (դասական երաժշտա-կան գործիքներ՝ դաշ-նամուր, ջութակ, թավ-ջութակ) 11-20 տարե-կան 15 տաղանդավոր պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական ունակությունների զարգացում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե (դրամաշնորհային ծրագրերի միջոցով) |
| 32. | Արվեստի տարբեր ոլորտներում մանկապատանեկան մրցույթների, փառատոնների համերգների, ցուցահանդեսների կազմակերպում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Շնորհալի երեխաների բացահայտում, նրանց մասնագիտական ունակությունների զարգացում, հանրության շրջանում | 2020թ. ընթացքում | Միջազգային ու հանրապետական մի շարք մրցույթ-փառատոների կազմակերպում: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե (դրամաշնորհային ծրագրերի միջոցով) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | մշակութային կրթության նկատմամբ հետաքրքրության մեծացում | | | |
| 33. | Մանկապատանե-կան ֆիլմերի միջազգային փառատոնի իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Փառատոնը կնպաս-տի մանկական կի-նոյի զարգացմանն ու հանրահռչակմանը, երեխաների հայրենա-սիրական դաստիարակությա-նը և աշխարհայաց-քի ընդլայնմանը, ժամանցի և հանգս-տի կազմակերպմանը | 2020թ. ընթացքում | Մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոնի իրականացում | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ (դրամաշնորհային ծրագրերի միջոցով) |
| 34. | Պետական աջակ-ցություն հատուկ կարիքներով, սոցիալապես անա-պահով երեխաներին մշակութային մաս-նագիտական ուսուց- | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | ՀՀ մշակույթի նա-խարարության «Երե-խաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունքում ՀՀ մարզերում գործող մանկատներում, | 2020թ. ընթացքում | Երեխաների համար արվեստի և արհեստների անվճար ուսուցման կազմակեր պում (12 մասնագիտու թյամբ՝ երգարվեստ, պարարվեստ, թատերա կան արվեստ, դեկորա տիվ-կիրառական արվեստ, | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ման և գեղագիտա-կան դաստիարա-կության ոլորտում՝<br><br>արվեստների և արհեստների ուսու-ցում | | հատուկ հանրակրթական դպրոցներում, երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններում, մշակույթի տներում՝ հաշմանդամ, ծնողա-զուրկ և սոցիալապես անապահով ընտանիքի երեխա-ներ կստանան ար-վեստների և արհեստների ուսու-ցում: | | գեղանկար չություն, ձեռագործ, ասեղնագործություն, հելունագործություն և այլն): | |
| 35. | «Դպրոցականի ֆիլհարմոնիա» դաս-ծրագրի իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Ճանաչողական, բացատ-րական համերգների միջոցով երեխաների գեղագիտական դաստիա-րակության, աշխար-հայացքի ընդլայնման և բարձրաճաշակ ու | 2020թ. ընթացքում | Ծրագրի շրջանակներում շուրջ 50 դաս-համերգի կազմակերպում, | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | գրագետ ունկնդրի դաստիարակում | | | |
| 36. | Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքների իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատու-թյունների մանկավարժ-ների և սովորողների մասնագիտական ունա-կությունների զարգացման նպատակով ուսումնա-մեթոդական և գործնա-կան աջակցության ցուցաբերում: | 2020թ. ընթացքում | ՀՀ երաժշտական ու արվեստի դպրոցների մանկավարժների դասավանդման որակի բարձրացում, շնորհալի աշակերտների բացահայտում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br><br>(դրամաշնորհային ծրագրերի միջոցով) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 37. | Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռք բերում և ուսումնամեթոդական գրականության մշակում ու հրատարակում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատու-թյունների սովորողներին երաժշտական գործիքների և դպրոցներին մեթո-դական ձեռնարկների, դասագրքերի, առարկա-յական ծրագրերի ձեռարկների անվճար տրամադրում: | 2020թ. ընթացքում | Տրամադրված գործիքների ու գրականության քանակ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 38. | «Մուլտիպլիկացիոն կինոնկարների արտադրություն» ծրագրի իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Մանկապատանեկան լսարանին ուղղված կրթադաստիարակչական ուսուցողական, հայկական ազգային արժեհամակար-գը հանրահռչակող, նրանց ազատ | 2020թ. ընթացքում | Մուլտֆիլմերի նկարահանում: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br><br>(դրամաշնորհային ծրագրերի միջոցով) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ժամանացի կազմակերպմանն ուղղված անիմացիոն ֆիլմերի ստեղծում: | | | |
| 39. | «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրեր մայրաքաղաքում» ծրագրի իրականացում» | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Շնորհալի երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում և խթանում: | 2020թ. ընթացքում | ՀՀ մարզերի երաժշտական ու արվեստի դպրոցների սովորողների լավագույն նկարչական և դեկորատիվ-կիրառական աշխատանքների ցուցահանդեսի ու պարի խմբերի համերգների կազմակերպում: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br><br>(դրամաշնորհային ծրագրերի միջոցով) |
| 40. | Հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև սոցիալապես անապահով կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար միջոցառումների իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Հաշմանդամություն ունեցող երեխաների և պատանիների ստեղծագործական ներուժի բացահայտում և խթանում, խոցելի խմբերի երեխաների մշակութային ինտեգրում հասարակությանը, | 2020թ. ընթացքում | Հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց հարցերով զբաղվող հասարա-կական կազմակեր-պությունների ստեղծագործական ծրագրերի (ցուցահանդեսների, համերգների, փառա-տոների, մրցույթների և այլ մշակութային ծրագրերի մասնակ- | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br><br>(դրամաշնորհային ծրագրերի միջոցով) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | բարոյահոգեբանական դրական մթնոլորտի ձևավորում և հասարա-կական կարծրատիպերի հաղթահարում | | ցություն) նպատակային աջակցություն | |
| 41. | Հանրակրթական դպրոցների աշակերտների համար մշակութային հաստատություններ այցելությունների բաժա-նորդային համակարգի իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Դպրոցահասակ երեխա-ներին և սովորողներին արվեստին հաղորդակց-վելու մատչելիության ապահովում: Երեխաների հոգևոր-մշակութային, գեղագիտական դաստիարակության նպատակային ուղղորդում: | 2020թ. ընթացքում | Երեխաների անվճար այցելությունների կազմակերպում երեք մշակութային հաստատություն՝ թանգարան կամ պատկերասրահ, թատրոն և դասական երաժշտության համերգասրահ: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 42. | Թանգարան ՊՈԱԿ-ներում ինտերակտիվ կրթական ծրագրերի, ցուցահանդեսների, համերգ | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Հանդիպումները կունենան ճանաչողական, ուսուցողական բնույթ, կխթանեն երեխաների | 2020թ. ընթացքում | Նախարարության ենթակայության թանգարաններում նպատակային ծրագրերի կազմակերպում: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br>(դրամաշնորհային ծրագրերի միջոցով) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | դասախոսու-թյունների, էքսկուրսիաների կազմակերպում | Մշակույթի ոլորտ | հաղորդակցման հմտու-թյունները, երևա-կայությունը, կզարգացնի ստեղծագործելու ունակությունները: Ծրագրերը կիրականաց-վեն արվեստների, առաս-պելների, հերոսամար-տերի, քաղաքացիական վարքականոնի, հայրենա-գիտության թեմատիկ անիմացիաների, դասերի և խաղերի միջոցով: | | | |
| 43. | «Քո արվեստը դպրոցում» ծրագրի իրականացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Մշակույթի ոլորտ | Ծրագիրը միտված է դպրոցականների շրջանում զարգացնելու կերպարվեստի, երաժշտության և գրականության հանդեպ | 2020թ. ընթացքում | Արվեստագետների և տեսաբանների կողմից հանրակրթական ուսումնական հաստա-տություններում ոլորտի երեք հիմնական ուղղությունների՝ դասական երաժշտության, կերպարվեստի և գրականության դաս- | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br><br>(դրամաշնորհային ծրագրերի միջոցով) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հետաքրքրությունը և ճանաչողությունը: | | ընթացների իրականացում: | |
| 44. | «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Սպորտի ոլորտ | Նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ժամանցի, ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորումում | 2020թ. ընթացքում | Մասնակից նախադպրոցական հաստատությունների թվի աճ նախորդ տարիների համեմատությամբ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 45. | «Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների միջև սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Սպորտի ոլորտ | Անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում | 2020թ. ընթացքում | Մասնակից դպրոցների և երեխաների թվի աճ նախորդ տարիների համեմատությամբ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 46. | «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Սպորտի ոլորտ | «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դերի կարևորում, ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպմանն աջակցում, | 2020թ. ընթացքում | Երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների երեխաների շրջանում սպորտով զբաղվողների թիվ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորմանը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ուղղորդում դեպի սպորտ, սոցիալական հավասարության խթանում | | | |
| 47. | «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Սպորտի ոլորտ | Անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական | 2020թ. ընթացքում | Մրցույթի մասնակից ընտանիքների թիվ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում: | | | |
| 48. | Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Սպորտի ոլորտ | Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և ՀՀ ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում: | 2020թ. ընթացքում | Հնարավորինս մեծ թվով դպրոցների մասնակցություն նախնական փուլերում նախորդ տարիների համեմատությամբ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 49. | ՀՀ մարզերում և Արցախի Հանրապետությունում հանրապետական<br><br>մարզական փառատոնի անցկացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Սպորտի ոլորտ | ՀՀ մարզերում և Արցախում բնակչության տարբեր տարիքային խմբերի՝ այդ թվում երեխաների առօրյայում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի | 2020թ. ընթացքում | Փառատոնի մասնակիցների թիվ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | արմատավորման նպատակով համալիր ծրագրերի իրագործում: | | | |
| 50. | ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների սպարտակիադայի անցկացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Սպորտի ոլորտ | Հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում, աշակերտների շրջանում ֆիզիկական պատրաստվածության բարելավում, նրանց աշխատունակության բարձրացում, առողջության ամրապնդում: | 2020թ. ընթացքում | Հնարավորինս մեծ թվով դպրոցների մասնակցություն նախնական փուլերում նախորդ տարիների համեմատությամբ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 51. | «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Հաշմանդամություն ունեցող մարզիկների շրջանում ֆիզիկական | 2020թ. ընթացքում | Մրցույթի մասնակիցների թիվ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Սպորտի ոլորտ | կուլտուրայի և սպորտի մասսայականացում: | | | |
| 52. | Ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անչափահասների հանրակրթության իրականացում | Արդարադատության նախարարություն | ՀՀ Սահմանադրության 38-թր հոդվածով ամրագրված կրթության իրավունքի իրացման ապահովում | 2020թ. ընթացքում | «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պարտադիր միջնակարգ կրթության իրականացում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 53. | Իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակություն | Արդարադատության նախարարություն | ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» ՔԿՀ-ի ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անչափահասների, ինչպես նաև պրոբացիայի շահառու հանդիսացող անչափահասների համար գեղագիտության դաստիարակության դասընթացների իրականացում (խեցեգործություն, վիտրաժ, բատիկա, մանրանկարչություն և այլն) | 2020թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված՝ ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսության իրագործում: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 54. | Անչափահասների արդարադատության խորհրդի գործունեության կազմակերպում | Արդարադատության նախարարություն | Անչափահասների արդարադատության խորհրդի գործունեության ապահովում (տարեկան կազմակերպել խորհրդի առնվազն 3 նիստ) | 2020թ. ընթացքում | Անչափահասների արդարադատության խորհրդի գործունեության ընթացքում վեր հանել անչափահասների արդարադատության ոլորտի հիմնախնդիրներն ու մարտահրավերները և դրանց արդյունավետ լուծման համար առաջարկություններ ներկայացնել համապատասխան պետական մարմիններին | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br>Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 55. | Անչափահասների (երեխաների) հետ աշխատող քրեակատարողակա ն և հարկադիր կատարումն ապահովող ծառայողների | Արդարադատության նախարարություն | Անչափահասների (երեխաների) լսված լինելու և անձնական տվյալների պաշտպանության իրավունքների իրացման, ինչպես նաև երեխաների | 2020թ. ընթացքում | Քրեակատարողական և հարկադիր կատարումն ապահովող ծառայողների համար ամենամյա պարտադիր վերապատրաստումների շրջանակներում անչափահասների | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br>Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վերապատրաստում ների իրականացում | | լավագույն շահի ապահովման նպատակով քրեակատարողակա ն և հարկադիր կատարումն ապահովող ծառայողների համապատասխան մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների շարունակական կատարելագործում (արհեստավարժությ ան մակարդակի բարձրացում) | | (երեխաների) լսված լինելու և անձնական տվյալների պաշտպանության իրավունքների իրացման, ինչպես նաև երեխաների լավագույն շահի ապահովման ուղղված համապատասխան դասընթացների (ըստ անհրաժեշտ դասաժամերի) կազմակերպում | |
| 56. | Անչափահասների վերականգնողական արդարադատության իրականացում | Արդարադատության նախարարություն | Անհրաժեշտ է ներդնել ազատազրկված և պրոբացիայի շահառու անչափահասների հետ իրականացվող աշխատանքներում ռիսկերի և | 2020թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված՝ ազատազրկման ավանդական | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կարիքների գնահատման գործիքակազմ, մշակել վերասոցիալականցման ուղղված ծրագրեր և դրանց իրականացման համապատասխան մեթոդիկա | | գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսության իրագործում: | |
| 57. | Համայնքների աղետների ռիսկի կառավարման պլանների ներդնում | Արտակարգ իրավիճակների նախարարություն | 1) Աղետների ռիսկի կառավար-ման պլանների առկայություն, 2) տարածքում բնական և տեխ-նածին բնույթի վտանգների բացա-հայտում, 3) աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների | 2020թ. ընթացքում | Համայնքում աղետների ռիսկի կառավարման պլանի մշակում, համաձայնեցում համապատասխան մարզպետարանի և ԱԻՆ ՓԾ տարածքային ստորաբաժանման հետ, հաստատում համայնքի | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | մշակում և իրա-<br>կանացում,<br>4) համայնքի<br>բնակիչների շրջա-<br>նում աղետների<br>ռիսկի կառավար-<br>ման մշակույթի<br>ձևավորում,<br>5) բնակիչների<br>անվտանգության և<br>համայնքների<br>դիմակայունութ-յան<br>բարձրացումն<br>արտակարգ<br>իրավիճակների<br>ժամանակ,<br>6) արտակարգ<br>իրավիճակներում<br>հայտնված, դրանց<br>հետևանքով<br>տեղահանված կամ<br>փախստական<br>դարձած<br>երեխաների<br>խնամքի,<br>պաշտպանության և<br>ինտեգրման<br>պատշաճ և<br>ժամանակին արձա-<br>գանքման<br>պլանավորում,<br>արտա-կարգ | | ղեկավարի կողմից և<br>կիրարկման ապահովում: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | իրավիճակներում հայտնը-ված, արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած հաշմանդա-մություն ունեցող երեխաների հետ օպերատիվ համագործակցությա ն պլանավորում | | | |
| 58. | Ուսումնական հաստատություններ ի աղետների ռիսկի կառավարման պլանների ներդնում | Արտակարգ իրավիճակների նախարարություն | 1) Աղետների ռիսկի կառավար-ման պլանների առկայություն,<br>2) տարածքում բնական և տեխ-նածին բնույթի վտանգների բացա-հայտում,<br>3) աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների մշակում և իրա-կանացում,<br>4) աշակերտների և անձնակազ-մի շրջանում աղետների ռիսկի կա-ռավարման մշակույթի ձևավորում, | 2020թ. ընթացքում | Ուսումնական հաստատությունում աղետների ռիսկի կառավարման պլանի մշակում, համաձայնեցում համապատասխան համայնքապետարանի և ԱԻՆ ՓԾ տարածքային ստորաբաժանման հետ, հաստատում ուսումնական հաստատության ղեկավարի կողմից և կիրարկման ապահովում: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 5) աշակերտների և անձնակազ-մի անվտանգության և ուսումնա-կան հաստատության դիմակայու-նության բարձրացումն արտա-կարգ իրավիճակների ժամանակ, արտակարգ իրավիճակների ար-ձագանքման միջոցառումների մշակում և ուսուցում, այդ թվում՝ կյանքի փրկության և վնասվածք-ների նվազեցման, ուսումնական հաստատության գույքի պահպանման | | | |
| 59. | Կազմակերպել քննարկումներ՝ 12-ից 18 տարեկան իգական սեռի հակասոցիալական վարքագիծ | Ոստիկանություն | Հակասոցիալական վարք դրսևորած իգական սեռի անչափահասների վերինտոեգրումը | 2020 թ. ընթացքում | Անցկացված քննարկումներ և հանդիպումներ հակասոցիալական վարքագիծ դրսևորած իգական սեռի | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | դրսևորած անչափահասների համար վերականգնողական կենտրոնի /ծառայությունների/ ստեղծման ուղղությամբ | | հասարակության մեջ | | անչափահասների համար վերականգնողական կենտրոն /ծառայություններ/ ստեղծելու ուղղությամբ | |
| 60. | Խթանել նոր համայնքային վերականգնողական կենտրոնների բացմանը, շարունակել համագործակցել գործող համայնքային վերականգնողական կենտրոնների հետ | Ոստիկանություն | Անչափահասների կողմից կատարվող հանցագործությունն երի, կրկնահանցագործու թյունների կանխարգելում և դրանց թվի նվազում | 2020 թ. ընթացքում | Ոստիկանությունում հաշվառված, ինչպես նաև բռնության ենթարկված, սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք ունեցող անչածահասներին կտրամադրվեն անհրաժեշտ ծառայություններ | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 61. | ՀՀ տարածքում գործող հանրակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում կազմակերպել և անցկացնել տարբեր իրավական թեմաներով զրույցներ և հանդիպումներ | Ոստիկանություն | Անչափահասների շրջանում կնվազի նրանց կողմից կատարվող հանցագործությունների թիվը | 2020 թ. ընթացքում . | Աշակերտների իրավական գիտելիքների մակարդակի բարձրացում, հակաօրինական արարքների մասին իրազեկվածություն | Ֆինանսավորում չի պահանջում |
| 62. | Անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների իրավասու ծառայողների կողմից սպասարկվող հանրակրթական դպրողներում կազմակերպել և անցկացնել զրույցներ ծնողների, | Ոստիկանություն | Ծնողները կտեղեկացվեն անչափահասների շրջանում տարածված հանցագործություններին, միևնույն ժամանակ ընտանիքում կատարվող բռնություններին,առկա պաշտպանական միջոցներին | 2020թ. ընթացքում | Ծնողների իրազեկվածության մակարդակի բարձրացում | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ծնողկոմիտեների անդամների հետ | | | | | |
| 63. | Անչափահասների մուրացկանության մեջ ներգրավվելու դեպքերը հայտնաբերելու նպատակով ոստիկանության տարածքային ստորաբաժանումնե րի կողմից անցկացնել ստուգայց-շրջագայություններ | Ոստիկանություն | Անչափահասներին մուրացկանության կամ շահագործման մեջ ներգրավվելու դեպքերի կանխարգելում, բացահայտում և դրանց թվի նվազում | 2020թ. ընթացքում | Անչափահասների կողմից և անչափահասների նկատմամբ կատարվող հանցագործությունների նախականխում, կանխարգելում և բացահայտում | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 64. | Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժինների հետ համագործակցության շրջանակներում ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումներում հաշվառման մեջ գտնվող անչափահասների ուղղորդում ճամբարներ | Ոստիկանություն | Անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների կամ այլ իրավախախտումների կանխարգելում | 2020թ. ընթացքում | Ամռան ամիսների ընթացքում ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումներում հաշվառված անչափահասների զբաղվածության ապահովու | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ